Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021 «Լոռու մարզում հանրային ավտոբուսի տրամադրման» ծրագրի ստորագրման արարողություն

2022 թ. մարտի 1-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի ունեցավ 91,206 ԱՄՆ դոլար արժողությամբ «Լոռու մարզում հանրային ավտոբուսի տրամադրման» ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն պարոն Կորյուն Խաչատուրյանի միջև: Արարողությանը ներկա էր նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Գնել Սանոսյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել տրանսպորտային ծառայությունները և բարձրացնել Լոռու մարզի բնակիչների, այդ թվում՝ հաշմանդամների կյանքի որակը՝տրամադրելով Վանաձոր-Դսեղ երթուղին սպասարկող ավտոբուս, որը հարմարավետ կլինի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Արդյունքում ավելի քան 5000 մարդ կկարողանա օգտվել ավելի լավ տրանսպորտային ծառայություններից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Նախարար պարոն Սանոսյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը

Դեսպան Ֆուկուշիման, պարոն Սանոսյանը, պարոն Խաչատուրյանը